Հայաստանում նորածինների լսողության զննումն իրականացվելու է նորագույն սարքերով

Հայաստանում Ճապոնիայի արտակարգ և լիազոր դեսպանը և «Հավատ» վատ լսող երեխաների մայրերի միություն ՀԿ տնօրենը մարտի 14-ին ստորագրեցին ՀՀ-ում «Նորածինների լսողության հետազոտման սարքավորումների» դրամաշնորհի տրամադրման պայմանագիր:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ լսողության նորածնային սքրինինգի ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է Ճապոնիայի կառավարության կողմից, այն կազմելու է մոտ 91 հազար ԱՄՆ դոլար և տրամադրվելու է Հայաստանում առկա ծննդատներին:

Նորագույն սարքերը հնարավորություն են տալու երեխայի ծնվելու երկրորդ օրվանից սկսած ստուգել և ախտորոշել խնդիրը: Կնքվող պայմանագրով Հայաստանում Ճապոնիայի կառավարությունը կֆինանսավորի 22 սարքի ձեռքբերումը, որի արդյունքում լսողության նորածնային սկրինինգ կիրականացվի նորածինների 98 տոկոսի մոտ:

Միջոցառմանը ներկա ՀՀ ԱԺ նախագահ Արա Բաբլոյանը նշեց, որ առողջապահության մասին խոսելիս՝ պետք է հստակ պատկերացնել հիմնական նպատակը՝ բնակչության առողջության պահպանումը:

«Մեր կարևորագույն նպատակները առողջապահության ոլորտում պետք է ուղղված լինեն հիվանդությունների կանխարգելմանը, հաշմանդամության և մահացության կրճատմանը: Այս ծրագիրը, որը մենք իրականացնում ենք, հենց առողջապահության հիմքում է ընկած: Մենք լավ ենք հիշում այն դժվարությունները, երբ բնածին լսողության խնդիրները հայտնաբերվում էին մի փոքր ավելի մեծ տարիքում: Եթե համեմատենք երեխաների խոսքը, ում խնդիրը հայտնաբերվել է վաղ հասակում և հնարավորություն է եղել սարքավորումների միջոցով լսողությունը վերականգնելու և բնական ճանապարհով խոսքը սովորելու, ապա կտեսնենք տարբերությունը»,- ասաց Բաբլոյանը և հավելեց, որ վաղ հասակում լսողական խնդրի հայտնաբերման արդյունքում հասարակությունում ավելի շուտ ինտեգրվելու հնարավորությունը երեխաների մոտ ավելի է մեծանում, ինչը ԱԺ նախագահը շատ է կարևորում:

Նրա խոսքով՝ այսօր հնարավորություն կա համատեղ ջանքերով բոլոր ծննդատներն ապահովել համապատասխան սարքերով:

Մինչ այսօր հետազոտություն անցել է 150 հազար նորածին, որոնցից 191-ի մոտ հայտնաբերվել են լսողության տարբեր աստիճանի խանգարումներ:

1
18:58 14/03/2018

Lragir.am Նորությունների կայքից.
http://www.lragir.am/index/arm/0/society/view/171959